ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատի գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ գյուղապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար՝

աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2):

Նշված պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ Առնվազն միջնակարգ կրթություն

բ/ Ունի <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Բյուջետային համակարգ մասին>>, <<Տեղական Տուրքերի մասին >>,<< Գույքահարկի մասին>>,<<Եկամտահարկի մասին >>, << Հաշվապահական հաշվառման մասին >> ՀՀ օրենքների , աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն , ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ/ Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության:

դ/Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոներով աշխատելու հմտություն:

ե/ Պատասխանատվություն է կրում համակարգչային մուտքագրման ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար.

զ/ ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքին.

է/Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Առաջատար մասնագետն ունի օրենքով , իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Մրցույթը կկայանա 2015թ. փետրվարի 2-ին, ժամը 14:00-ին, Սարդարապատի գյուղապետարանում Աբովյան 74 հասցեում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1.Դիմում մրցութային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/ դիպլոմի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ միասին:

2. Արական սեռի անձինք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճեն բնօրինակի հետ միասին:

3. Մեկ լուսանկար 3/4 չափի:

4. Անձնագրի պատճեն:

5. Հայտարարություն այն մասին, որ նա չի տառապում , ՀՀ կառավարության 2005թ-ի մարտի 3-ի թիվ 310-ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի որևիցե մեկ հիվանդությամբ:ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:Դիմումների ընդունման վերջին ժամկետը 2015 թվականի հունվարի 22-ն է:Այլ տեղեկությունների համար դիմել գյուղապետարան հեռ.(093-57-73-23) կամ Արմավիրի մարզպետարան ՏԻ և ՀԳՄ –ների հարցերով վարչություն:Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր բացի շաբաթ և կիրակի օրերից: